# ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

15.12.2023 16:05

Հարգելի՛ մրցույթի մասնակիցներ,

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթի կազմակերպման և մրցույթի արդյունքների գնահատման մրցութային հանձնաժողովը 2023թ. դեկտեմբերի 15-ին հրավիրված նիստում ամփոփել է հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու համար 2023 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած մրցույթի գրավոր փուլի արդյունքները:

Նկատի ունենալով, որ հրապարակված տվյալներում առկա են միայն ծածկագրեր և հնարավոր չէ որոշել, թե ով է ծածկագրի հեղինակը, մրցութային հանձնաժողովը հրավիրում է մրցույթի մասնակիցներին ներկա գտնվելու ծածկագրերի և անվան ու ազգանվան նշումով աշխատանքները պարունակող կնքված արկղի բացմանը, որը տեղի կունենա 2023թ-ի դեկտեմբերի 15-ին ժամը 17:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան Ձաքյան 7-2 հասցեում, 4-րդ հարկ):

**Բեռնել քրեական ուղղվածության դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու գրավոր առաջադրանք կատարված աշխատանքների ծածկագրերի և գնահատականների ցանկը.**

**Բեռնել քաղաքացիական ուղղվածության հայցադիմում կազմելու գրավոր առաջադրանք կատարված աշխատանքների ծածկագրերի և գնահատականների ցանկը.**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })